ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1238-Ա « 03 » ապրիլի 2025թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

Հավելված
Երևանի քաղաքապետի
03.04. 2025թ.
հ. 1238-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Վարդուշ Ղազարոսյան	«Մասիս-Ա» այգետարածք, հ.478	հողամաս	Վարդուշ Ղազարոսյանին հատկացված, «Մասիս-Ա» այգետարածքի 525.0քմ մակերեսով հ.478 հողամասին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 07.05.2024թ. հ.Հ-4588 տեղեկանք և Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.01.2025թ. հ.ԱՎԴ2/0191/02/24 վճիռ/ տրամադրել հասցե՝ Նուբարաշեն «Մասիս-Ա» այգեգործական տարածք, հ.478	01103ASUGPVS	
2	Աբգար Սիսակյան	Նոր Խարբերդի այգետարածք, հ.122	հողամաս	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 10.12.2024թ. հ.10040 լրացուցիչ վկայագրով, Աբգար Սիսակյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Նոր Խարբերդի այգետարածքի 500.0քմ մակերեսով հ.122 հողամասին տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, Աջափնյակ թաղամաս, 2-րդ փողոց, հ.57	011136GP9D47	
3	Արամ Ազիզյան	Գուսան Շերամի փողոց, հ.39 շենք, հ.55	բնակարան	Արամ Ազիզյանին սեփականության իրավունքով պատկանող, Գուսան Շերամի փողոց, հ.39 շենք, հ.55 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.26032025-01-0143, ընդհ. բաժն. 1.4քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 44.6քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Գուսան Շերամի փողոց, հ.39 շենք, բն.55/1	01073DLJXRGY	
4	Սարգիս և Ռոբերտ Պետրոսյաններ	Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, հ.2/27	հողամաս	Սարգիս և Ռոբերտ Պետրոսյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի հ.2/27 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.08082024-01-0180/ բաժանման հատակագծով առանձնացվող 211.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, հ.2/26	01073CCXTQKK	

5	«ՌԱԹԱՆ ՏԵՔՍ» ՍՊԸ	Զ. Քանաքեռցու փողոց, հ.155	արտադրամաս	«ՌԱԹԱՆ ՏԵՔՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Զ. Քանաքեռցու փողոցի հ.155 հասցեում գտնվող արտադրամասին /վկ. հ.18032025-01-0203, հող. 699.3քմ/ տրամադրել հասցե՝ Զաքարիա Քանաքեռցու փողոց, հ.135	01123HENCPKV	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246